

## ԼԱՏԻՆԵՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ

### ՆԵԼԼԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Բազմազան ու տպարանույթ են ականավոր հայագետ-լեզվաբան, ակադեմիկոս Էդ. Աղայանի գիտական, մանկավարժական գործունեության ոլորտները:

Եթե հայ լեզվաբանների ավագ և միջին սերնդի ներկայացուցիչները քաջատեղյակ են անվանի լեզվաբանի գիտական ժառանգությանը, իսկ հայ աշակերտության բազմաթիվ սերունդներ հայոց լեզվի վերաբերյալ իրենց հիմնավոր գիտելիքների համար պարտական են Էդ. Աղայանի և Հովհ. Բարսեղյանի «Հայոց լեզու» դասագրքին, ապա թերևս սխալված չենք լինի ասել, որ շատ քերին է հայտնի Աղայան-լատինագետը: Մինչդեռ լատիներենի նրա դասագիրքը պետք է ըստ արժանվույն գնահատվի՝ որպես այդ բնագավառի առաջին և հաջողված փորձ, որ երկար ժամանակ իր անգնահատելի դերն է կատարել Հայաստանում լատիներենի ուսումնասիրության բնագավառում, մանավանդ որ համալսարանում և մի շարք այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում լատիներենը մտցված էր որպես ուսումնական առարկա:

Այդ էր պատճառը, որ դեռևս նախապատերազմյան ժամանակաշրջանում խորաբափանց գիտնականը զգում է հայերենով գրված՝ լատիներենի քերականության դասագրքի պակասը, խորանուխ է լինում դասագրքի ստեղծնան աշխատանքներին և այն ավարտին է հասցնում 1939 թվականին, երբ դեռ ասպիրանտ էր: Սակայն, պատերազմական իրադրության պատճառով գրքի հրատարակությունը իրականություն է դառնում միայն 11 տարի անց<sup>1</sup>: Գիրքը լույս է ընծայել Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը հազար օրինակ տպաքանակով, պատասխանատու խմբագիրն է եղել Գ. Զահուլյանը: Դասագրքի նախաբանում իրեն հատուկ պատասխանատվությամբ էր. Աղայանը ներողանտություն է հայցում աշխատանքում հնարավոր թերությունների համար և պատրաստակամություն հայտնում ընդունելու առողջ քննադատությունն ու խորհուրդները: Ցավոք, լատիներենի դասագրքի երկրորդ՝ շարահյուսությանը նվիրված մասը, որ նախատեսում էր ստեղծել հեղինակը, լույս չի տեսնել մեզ անհայտ պատճառներով:

Էդ. Աղայանը, իր «Լատիներեն լեզվի դասագրքում», հետևելով կառուցվածքային լեզվաբանության սկզբունքներին, ամենայն բարեխորդությամբ նկարագրում է այդ հնագույն լեզուն՝ ձգտելով հասնել նկարագրության լիակատարության և անհակասականության: Ինչպես նշում է հեղինակը գրքի համառոտ նախաբանում, նա նպատակ է դրել բաց չթողնել լա-

<sup>1</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Լատիներեն լեզվի դասագիրք, Եր., 1950:

տիմերենի քերականական ոչ մի իրողություն, լինի դա եզակի դեպք, թե ընդհանուր օրինաչափություն<sup>2</sup>:

Նախ նա նկարագրում է լատիներենի գրային և հնչյունական համակարգը՝ սկսած լատիներենի 24 տառից բաղկացած այբուբենից, որի մեջ ներառում է յ տառը, իսկ կ-ի մասին, որը հանդիպում է միայն հունարեն որոշ բառերում՝ *Kalenda*, *Kaeso* և այլն, խոսում է ծանոթության մեջ (էջ 7): Սովորաբար լատիներենի դասագրքերի հեղինակներն այս տառը ընդգրկում են այբուբենի մեջ, բայց միասնական սկզբունք չունեն և յ տառերի վերաբերյալ և երթեմն դրանք կիրառում են որպես զուգահեռ գրանշաներ, որ այնքան էլ հարմար չէ ուսումնական ձեռնարկների համար:

Այնուհետև առանձնացվում են լատիներենի ձայնավորները՝ **a, e, i, o, u, y**, չորս երկրարբառները՝ **ae – caecus, oe – foetus, au – auxilium, eu – meus**, և տրվում են որոշ տառերի ու տառակապակցությունների ընթերցման կամոնները, այսպես՝

**c** - ն արտասանվում է՝

**ա) e, i, y, ae, oe** -ից առաջ, ինչպես հայերեն *g-ն՝ caecus* «կույր».

**բ) a, o, u** ձայնավորներից, բոլոր բաղաձայններից առաջ և բառավերջում՝ կ’ **cultura** «մշակույթ»,

**ch-ն** արտասանվում է *ին` chronica* «ժամանակագրություն»,

**ngu-ն** արտասանվում է *նգվ` lingua* «լեզու»,

**ph-ն** արտասանվում է *ֆ` physica* «ֆիզիկա»,

**q-ն** միշտ **ս-ի** հետ է հանդես գալիս և կարդացվում է *քվ` quotidianus* «ամենօրյա»,

**rh-** ն արտասանվում է *ռ` rhetorica* «ճարտասանություն»,

**s-ն** երկու ձայնավորների միջև արտասանվում է *զ` Asia* «Ասիա», *rosa* «վարդ», իսկ մնացյալ դեպքերում՝ *ս` secundus* «երկրորդ»,

**th-ն** արտասանվում է *թ` theoria* «տեսություն»,

**ti-ն** ձայնավորներից առաջ արտասանվում է *ցի` amicitia* «բարեկամություն», իսկ մնացյալ դեպքերում՝ *տի` mixtim* «խառնված, խառնուրդ»:

Յոթերորդ էջի ծանոթության մեջ նշվում է, որ սկզբնապես դրանք բոլոր դիրքերում միատեսակ են արտասանվել, իսկ հետագայում տարբերակվել են: Յեղինակն առանձնակի ուշադրություն է դարձնում ձայնավոր հնչյուններին, որոնք լատիներենում լինում են երկար և կարճ՝ տարբերվելով հնչման տևողությամբ՝ գրավոր խոսքում արտահայտվելով կարճ (‘)՝ **leño** և երկար (‘)՝ **natūra** նշաններով:

Ներկայացվում է նաև լատիներենի վանկերի կառուցվածքը, որոնք, ինչպես և ձայնավորները, կարող են լինել երկար և կարճ: Վանկի երկարությունը և կարճությունը կախված են տվյալ վանկը կազմող ձայնավորների քանակից: Էդ. Աղայանը նշում է, որ վանկերը կարող են երկար լինել ըստ բնության (**natūra**) և ըստ դիրքի (**positione**): Այնուհետև անդրադառնում է լատիներենի յուրօրինակ շեշտի դրսնորմանը. շեշտվում է՝ ա) երկվանկ բառերի առաջին վանկը՝ **ro’sa**, բ) բազմավանկ բառերի վերջընթեր

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 4:

վանկը՝ **figū'ra**, զ) բազմավանկ բառերի նախավերջնթեր վանկը, եթե վերջնթերը կարծ է՝ **fa'brica**:

Հնչյունական իրողությունների նկարագրությունից հետո հեղինակն անդրադառնում է լատիներենի խոսքի մասերի ձևաբանական առանձնահատկությունների նկարագրմանը՝ սկսելով նյութական խոսքի մասերի քերականական կարգերից, և նաևնակիորեն անդրադառնում դրանց շարահյուսական կիրառություններին:

Առանց ավելորդությունների ներկայացնում է գոյականի (nomen substantivum) և ածականի (nomen adjectivum) քերականական հատկանիշները՝ նշելով, որ լատիներենում գոյականներն ու ածականներն ունեն երեք սեռ (genus): արական (masculinum), իգական (femininum) և չեզոք (neutrum), երկու թիվ (numerus): եզակի (singularis) և հոգնակի (pluralis), վեց հոլով՝ ուղղական (nominativus), սեռական (genitivus), տրական (dativus), հայցական (accusativus), գործիական (ablativus), կոչական (vocativus): Նշվում է, որ լատիներենի ablativus-ը համապատասխանում է հայերենի երեք հոլովներին՝ գործիական, բացառական և ներգոյական, սակայն նկատի ունենալով երեքը միասին գրելու անհարմարությունը՝ գրում ենք միայն «գործիական» (էջ 9):

Լատիներենի գոյականներն ունեն հինգ հոլովում (declinatio), որոնցից չորսի հիմքի վերջնահնչյունը ձայնավոր է, իսկ երրորդ հոլովնան գոյականներինը՝ բաղաձայն կամ ։ Քանի որ ժամանակի ընթացքում հիմքային հնչյունները բոլոր հոլովներում փոփոխության են ենթարկվել՝ բացառությամբ հոգնակի թվի սեռական հոլովի, ուստի գոյականների հիմքը որոշում ենք հոգնակի թվի սեռականից հանելով հոլովական վերջավորությունը:

Այսպիսով, բառերի հիմքերն ըստ տարբեր հոլովատիպերի կունենան հետևյալ պատկերը.

Decl.	I	II	III	IV	V
Nom. sing.	amica	hortus	leo	casus	dies
Gen. pl.	<b>amic-a-rum</b>	<b>horto-rum</b>	<b>leon-um</b>	<b>casu-um</b>	<b>die-rum</b>

Իսկ բառի պատկանելությունը այս կամ այն հոլովատիպին կախված է տվյալ բառի եզակի սեռական հոլովածնից, օրինակ՝

Decl.	I	II	III	IV	V
Nom.	amica	hortus	leo	domus	dies
Gen.	<b>amic-ae</b>	<b>hort-i</b>	<b>leon-is</b>	<b>dom-us</b>	<b>di-ei</b>

Բայց ոչ բոլոր գոյականներն են ենթարկվում հոլովման վերոհիշյալ տիպերին: Կան գոյականներ, որոնք չեն հոլովվում և գործածվում են տարբեր հոլովների իմաստներով. սրանք անհոլովելի (indeclinabilis) գոյականներ են, օրինակ՝ *fas* «բնական իրավունք», *nefas* «անօրինություն»:

Մի շաբթ գոյականներ ունեն ոչ բոլոր հոլովածները, դրանք Աղայանը կոչում է թերահոլով գոյականներ (defectiva casibus), օրինակ՝ միայն հայցական հոլովով են գործածվում *pessum*, *supperias* բառերը և միայն

հետևյալ արտահայտություններում՝ *pessum ire* «կործանվել», *pessum dare* «կործանել», *suptetias ferre* «օգնություն ցույց տալ»:

Մի շարք գոյականների տալիս է թերարիվ (defectiva numero) անվանումը՝ առանձնացնելով գոյականների խումբ, որոնք հոլովակում են միայն եզակի թվով՝ *sapientia* «ինաստություն», *amor* «սեր», *Cicero* «Ցիցերոն», և գոյականներ, որոնք հոլովակում են միայն հոգնակի թվով՝ *liberi* «երեխաներ», *divitiae* «հարստություն», *nuptiae* «հարսանիք»:

Գոյականին հաջորդում է ածականը՝ իր երեք հոլովակումներով և երեք սեռերով՝ արական, իգական և չեղոր: Անկախ այն բանից, թե որ հոլովական են ենթարկվում, ածականները կարող են լինել՝

1. Երեք վերջավորությամբ՝ ա) -us, -a, -um՝ *bonus*, *bona*, *bonum* «լավ»; բ) -er, -a, -um՝ *vafes*, *vafra*, *vafrum* «խորանանկ»; որոնք ենթարկվում են առաջին և երկրորդ հոլովական՝ և զ) -er, -is, -e՝ *celer*, *celeris*, *celere* «արագ»՝ երրորդ հոլովական ածականներ,

2. Երկու վերջավորությամբ՝ արական և իգական սեռերի համար մեկ ընդհանուր վերջավորություն՝ -is, -ior, և առանձին վերջավորություն չեղոր սեռի ածականների համար՝ -e, -ius: Այս ածականները ենթարկվում են երրորդ հոլովական: Օրինակ՝ *gravis*, *grave* «ծանր», *facilior*, *facilius* «ավելի հեշտ»;

3. մեկ վերջավորությամբ երրորդ հոլովական ածականներ, որոնք երեք սեռերի համար ունեն միևնույն վերջավորությունը: Օրինակ՝ *felix* «երջանիկ», *raupper* «աղքատ», *prudens* «ողջամիտ»:

Ինչպես գոյականների, այնպես էլ ածականների մեջ կան՝ ա) անհոլովելի (adjectiva indeclinabilia) *fructus nequam* «անպետք միրգ», *frugis nequam* «անպետք մրգեր», բ) թերահոլով (defectiva casibus) և զ) թերարիվ (defectiva numero) ածականներ, օրինակ՝ *exspes* «անհույս», *exlex* «օրինազանց»:

Լատիներենում հանդիպում են նաև բազմաձև ածականներ՝ ա) երկու և երեք վերջավորությամբ՝ *exanimus*, -a, -um և *exanimis*, -e «անշունչ», *hilarus*, -a, -um և *hilaris*, -e «ուրախ», բ) երեք և մեկ վերջավորությամբ՝ *opulentus*, -a, -um և *opulens* «հարուստ», *violentus*, -a, -um և *violens* «ուժեղ»:

Հայերենի նման լատիներենի ածականների համեմատության աստիճանները և երեքն են՝ դրական (*gradus positivus*), համեմատական (*gradus comparativus*) և գերադարձական (*gradus superlativus*)՝

<i>altus</i> «բարձր»	<i>altior</i> , -ius	<i>altissimus</i> , a, um
<i>celer</i> «արագ»	<i>celerior</i> , -ius	<i>celerrimus</i> , a, um
<i>similis</i> «նման»	<i>similiorius</i>	<i>similimus</i> , a, um
<i>bonus</i> «լավ»	<i>melior</i> , <i>melius</i>	<i>optimus</i> , a, um

Եղ. Աղայանը ներկայացնում է նաև անկանոն ածականները, որոնք համեմատության աստիճաններ են կազմում տարահիմքությամբ, որը հատուկ է եվրոպական շատ լեզուների, բայց ոչ հայերենին: Մի քանի ածականների դրական աստիճանը գործածվում է որպես նախադրություն, օրինակ՝ *citra* «այս կողմ», *intra* «ներս», *prae* «առջև»: Մի քանի ածականներ էլ չունեն համեմատության աստիճան՝ *bellus* «սիրուն», *diversus* «տարբեր», *inclitus* «նշանավոր»:

Հայերենի նման լատիներենի հարաբերական ածականները համենատության աստիճան չեն կազմում, օրինակ՝ *aureus* «ոսկյա», *Iarideus* «քարե»:

Թվականները բաժանված են չորս խմբի՝ քանակական (numeralia cardinalia)՝ սուս «մեկ», *octo* «ութ», *sexaginta* «վաթսուն» և այլն, դասական (numeralia ordinalia)՝ *primus* «առաջին», *octavus* «ութերորդ», *vicesimus* «քսաներորդ» և այլն, բաշխական (numeralia distributiva)՝ *singuli* «մեկական», *bini* «երկուական», *deni* «տասական» և բազմապատկական (numeralia multiplicantia)՝ *semel* «մեկ անգամ», *bis* «երկիցս», *decies* «տասն անգամ» և այլն: Դասագրքում ներկայացված են լատիներենին հատուկ՝ հոլովկող և չհոլովկող թվականների առանձնահատկությունները:

Դերանունները լատիներենում յոթն են՝ անձնական (pronomina personalia), որի մեջ մտնում է նաև անդրադարձ դերանունը (pronomen reflexivum)՝ *sui* «իր», ցուցական (pronomina demonstrativa), ստացական (pronomina possessiva), հարաբերական (pronomen relativum), հարցական (pronomina interrogativa), անորոշ (pronomina indefinita), համահարաբերական (pronomina correlativa): Դասագրքում արտացոլված են դերանունների որոշակի հատկանիշներ, որոնք հատուկ են լատիներենին՝ կապված հոլովնան, դերանունների սեռերի և այլ մասնավոր հարցերի հետ. լատիներենը չունի երրորդ դեմքի անձնական դերանուն, որին փոխարինում է *is* «այն» ցուցական դերանունը:

Հնդեվրոպական շատ լեզուների ձևաբանական համակարգերում առանձնակի տեղ է գրավում բայց իր ձևերի հարստությամբ, կիրառություններով, իմաստային նրբերանգների ու քերականական կարգերի բազմազանությամբ: Նույնը պետք է ասել լատիներենի բայի մասին. Եղ. Աղայանը ներկայացնում է լատիներենի բայի քերականական կարգերը, որոնք նույնպես բազմազան են, ինչպես ժամանակակից հայերենում:

Լատիներենում բայն ունի երկու սեռ՝ ներգործական (genus activum) և կրավորական (genus passivum): Ներգործական սեռի բայերը լատիներենի քերականություններում բաժանվում են երկու խմբի՝ անցողական (verba transitiva), որոնց արտահայտած գործողության կատարման համար հարկավոր է խնդիր (objection), որին անցնում է գործողությունը, օրինակ՝ *amo patrem* «սիրում եմ հորս», և անանցողական (verba intransitiva), որոնց արտահայտած գործողությունը որևէ այլ առարկայի վրա չի անցնում, օրինակ՝ *curreo* «վազում եմ»: Այստեղ Եղ. Աղայանը անհրաժեշտ է համարել տալ ծանրթություն այն մասին, որ լատիներենի անցողականը համապատասխանում է հայերենի ներգործականին, իսկ անանցողականը՝ չեզորին: Կրավորական սեռը ցույց է տալիս, որ բայով արտահայտված գործողությունն իր վրա է կրում հենց ենթական՝ *amor a patre meo* «սիրվում եմ հորիցս»: Կրավորական սեռ կարող են ունենալ միայն անցողական բայերը:

Լատիներենի բայն ունի երեք եղանակ (modus)՝ 1. սահմանական (modus indicativus), որը համապատասխանում է հայերենի սահմանական եղանակին և ունի վեց ժամանակ, 2. ստորադասական (modus conjunctivus), որը համապատասխանում է հայերենի ենթադրական կամ ըղձական եղանակներին՝ *որ*, *որպեսզի* շաղկապներով, օրինակ՝ *oro*, *ut sis perattentus* «խնդրում եմ, որ ուշադիր լինես»: Ստորադասականն ունի չորս ժամա-

նակ (tempus)` ներկա (praesens), անցյալ անկատար (imperfectum), անցյալ կատարյալ (perfectum), գերակատար անցյալ (plusquamperfectum), 3. հրամայական (modus imperativus), որն ունի երկու ժամանակ՝ ներկա և ապառնի, որոնցից ներկան ունի միայն եզակի և հոգնակի թվերի երկրորդ դեմք՝ համապատասխան հայերենի հրամայականին՝ *amico*s tuos! «սիրի բարեկամներիդ»: Լատիներենում առկա է և երկրորդ ու երրորդ դեմքերի ապառնի հրամայական՝ եզակի և հոգնակի թվերով, որը չկա հայերենում և թարգմանվում է հարկադրական եղանակի ներկայով՝ *amato amicos suos!* «պետք է սիրե՛ս բարեկամներիդ»: Այն ունի երկու թիվ՝ եզակի (numerus singularis) և հոգնակի (numerus pluralis):

Լատիներենի բայն ունի վեց ժամանակ (tempus). լատիներենի ներկան (praesens), անցյալ անկատարը (imperfectum), անցյալ կատարյալը (perfectum) հիմնականում համապատասխանում են հայերենի նույն ժամանակներին, գերակատարը (plusquamperfectum)` հայերենի վաղակատարին կամ հարակատարին:

Առաջին ապառնին (futurum primum կամ simplex) համապատասխանում է հայերենի սահմանական եղանակի ապառնիին, օրինակ՝ *ամաօ* «սիրելու են»: Երկրորդ ապառնին (futurum secundum կամ exactum) հայերենում համապատասխան ձև չունի. այն ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը նախորդում է առաջին ապառնիին, օրինակ՝ *ut sementem faceris* (fut. II), *ita metes* (fut. I) «ինչ որ ցանես, այն կինձես»: Բայի ժամանակներից *praesens*-ը, *futurum I*-ը և *futurum II*-ը կոչվում են գլխավոր ժամանակներ, մնացյալ՝ *imperfectum*, *perfectum*, *plusquamperfectum* ժամանակները՝ պատճական:

Բացի բայի եղանակային ձևերից (verbum finitum)` կան նաև ոչ եղանակային ձևեր, որոնք կոչվում են *verbum infinitum* (անորոշ բայ): Այդ ձևերն են՝ *infinitivus*, *gerundium*, *supinum*, *participium*:

**Infinitivus**-ը համապատասխանում է հայերենի անորոշ դերբային, սակայն, ի տարբերություն հայերենի, որտեղ անորոշին ժամանակի հատկանիշը հատուկ չէ, լատիներենում այն ունի երեք ժամանակ՝ *a*) ներկա անորոշ (*infinitivus praesentis*)՝ *sanare* «բուժել», *b*) անցյալ անորոշ (*infinitivus perfecti*)՝ *sanavisse* «բուժած լինել», *c*) ապառնի անորոշ (*infinitivus futuri*) *sanaturus esse* «բուժելու լինել»:

**Gerundium**-ը բայ-գոյական է, որը հոլովվում է երկրորդ հոլովմամբ և ունի չորս հոլով՝ *genitivus*, *datus*, *accusativus*, *ablativus*, որոնք համապատասխանում են հայերենի անորոշ դերբայի համապատասխան հոլովներին:

**Supinum**-ը նույնական բայ-գոյական է, որն ունի երկու ձև՝ *supinum I* - սու վերջավորությամբ, համապատասխանում է IV հոլովման հայցական հոլովին, ունի ներգործական իմաստ և գործածվում է շարժում ցույց տվող բայերի հետ՝ *aratum* և «գնում են վարելու», *cubitum* և «գնում են քնելու», և *supinum II* - սու վերջավորությամբ, որը ըստ ձևի IV հոլովման *abl.* հոլովն է, ունի կրավորական իմաստ և գործածվում է ածականների հետ՝ *facilis* «հեշտ», *gravis* «ծանր»՝ օր.՝ *difficile scriptu est* «դժվար գրելի է», *res facile est factu* «հեշտ արվելու բան է», *res facilis est dictu* «հեշտ ասվող բան է»:

**Participium**-ը ունի չորս ձև՝ *participium praesentis activi* (1), որը հա-

մապատասխանում է հայերենի ենթակայական դերբային կամ անորոշ դերբայի գործիական հոլովին, օրինակ՝ *homo arans* «վարող մարդ»: Ապառնի դերբայը լատիներենում ունի երկու ձև՝ *participium futuri activi* (2)՝ ներգործական սեռի ապառնի դերբայ, որն արտահայտում է մտադրություն, ենթադրություն և մեծ մասամբ գործածվում է *esse* բայի հետ՝ *scripturus sum* «Ես գրելու մտադրություն ունեմ», և *participium futuri passivi* կամ *gerundivum* (3)՝ կրավորական սեռի ապառնի դերբայ. այն ցույց է տալիս որևէ գործողություն, որը պետք է կատարվի հետագայուն, օրինակ՝ *liber legendus est* «գիրքը պետք է կարդացվի», իսկ *participium perfecti passivi* (4) անցյալ դերբայն ունի միայն կրավորական սեռ, գործածվում է և որպես ածական, և որպես բայի բաղադրյալ ժամանակների բաղկացուցիչ մաս՝ *liber scriptus* «գրված գիրք»:

Այնուհետև խոսվում է բայի *ժամանակային* և *բայական* հիմքերի և *խոնարհման* մասին: Ժամանակային կոչվում են այն հիմքերը, որոնցից կազմվում են բայի տարրեր ձևերը: Այդպիսի հիմքերը երեքն են՝ ներկա (*praesens indicativi activi*), անցյալ կատարյալ (*perfectum indicativi activi*) և սուլափին (*suspirium*): Այս երեք հիմքերից և անորոշ դերբայից կազմվում են մնացյալ ժամանակներն ու ձևերը: Բայական կոչվում է բայի այն չփոփոխվող մասը, որից կազմվում են ժամանակային հիմքերը:

Բայի եղանակային ձևերը կազմվում են դիմային վերջավորությունները ժամանակային հիմքերին կցելով: Դիմային վերջավորությունները բոլոր ձևերի համար նույնն են, բացի սահմանական եղանակի անցյալ կատարյալից և հրամայական եղանակի բոլոր ժամանակներից, որոնք ունեն իրենց հատուկ դիմային վերջավորությունները: Ընդհանրապես բոլոր բայերի (չհաշված անկանոնությունները) վերջավորությունները միանման են, տարրեր են միայն հիմքի ձայնավորները, որոնք բաժանվում են չորս խմբի, ուստի և՝ չորս խոնարհման (conjugationes). առաջին խոնարհում, որի հիմքի ձայնավորը կամ լջորդն է -*a* `sanare, երկրորդ խոնարհում՝ -*e* ձայնավորով՝ *nocere*, երրորդ խոնարհում, որի հիմքի հնչյունը որևէ բաղաձայն է կամ -*u* `tegere, *acuere*, և չորրորդ խոնարհում -*i* լջորդ ձայնավորով՝ *nutrire*: Նշենք, որ I, II և IV խոնարհումների -*a*, -*e*, -*i* ձայնավորները պատկանում են հիմքին, իսկ երրորդ խոնարհման մեջ կարծ ՚-ն հիմքն ու -*re* վերջավորությունն իրար միացնող ձայնավոր է:

Առանձին էջեր հատկացված են բացառական (*verba deponentia*), կիսաբացառական, սկսական (*verba inchoativa*), պակասավոր (*verba defectiva*) և անդեմ (*verba impersonalia*) բայերի նկարագրությանը:

Չթեքվող խոսքի մասերին նվիրված բաժնում հեղինակը խոսում է մակրայի (adverbium) տեսակների մասին՝ առանձնացնելով ժամանակի՝ *semper* «միշտ», *iām* «արդեն», *noctu* «գիշերը», *heri* «երեկ», *cras* «վաղը», տեղի՝ *ibi* «այնտեղ», *ubiq* «որտեղ», *huc* «այստեղ», *illuc* «այնտեղ» և այլն, ձևի՝ *fere* «համարյա», *solum* «միայն», *sponte* «ինքնին», *quam* «ինչպես», և անդրադարձնում է դրանց կազմությանն ու համեմատության աստիճաններին:

Մակրային հաջորդում են նախադրությունները (praepositiones), որոնք լատիներենում հիմնականում պահանջում են հայցական՝ *ante* «առաջ», *apud* «մոտ», *contra* «դեմ», *supra* «վրա» կամ գործիական հոլով՝ *de* «մասին», *cum* «հետ», *ex* «-ից, միջից», *pro* «փոխարեն», բայց կան նաև

մի քանի նախդիրներ, որոնք պահանջում են և հայցական, և գործիական հոլովներ՝ ու «մեջ», sub «տակ», super «վրա», subter «տակ»: Անդրադարձ է կատարվում նաև նախդիրների գործածության ու ածանցվող բառերում նրանց արտահայտած իմաստներին և այլ առանձնահատկություններին:

Առանձնացվում են համադասական և ստորադասական շաղկապներ՝ իրենց ենթատեսակներով: Համադասական շաղկապները լինում են՝ միացման (conjunctiones copulativae)՝ et, atque «կամ», nec «ոչ էլ», տարբերակման (conjunctiones disjunctivae) aut «կամ», vel «կամ», sive «ավելի», և հակադրման (conjunctiones adversatивae) vero «բայց», sed «բայց, իսկ», autem «սակայն»:

Ստորադասական շաղկապներն են՝ համեմատական (conjunctiones comparativae) sicut «այնպես, ինչպես», velut «կարծես թե» և այլն, պայմանական (conjunctiones conditionales) si «եթե», sin «քայց եթե», si minus «եթե առնվազն», զիջողական (conjunctiones concessivae) etsi, vis, licet «թեպետև, նույնիսկ, թեկուզե», նպատակային (conjunctiones finales) ut «որ», ut ne «որպեսզի չը...», quo «որ» և ժամանակային (conjunctiones temporales) ubi «հենց որ», donec «մինչև, քանի դեռ», simulac «հենց որ» և այլն: Լատիներենում առանձնացվում են նաև շաղկապներ, որոնց մի մասը գործածվում է համադասական, իսկ մյուս մասը՝ ստորադասական նախադասություններն իրար կապակցելու համար: Դրանք են՝ ամփոփիչ (conjunctiones conclusivae) ergo «հետևաբար», igitur «ուստի» և այլն, և պատճառական (conjunctiones causales) nam «քանի որ», quod «որովհետև» և այլն:

Լատիներենի չթերվող խոսքի մասերին են պատկանում նասնիկները (particulae), որոնք նախադասությանը կամ նրա առանձին անդամներին այս կամ այն երանգավորումն են հաղորդում: Լինում են՝ հարցական նաև նիկներ (particulae interrogative) num «միթե», ne «արդյոք», և ժխտական (particulae negativae) non, haud, ne «ոչ»:

Միջարկությունները (interjectiones) բաժանված են վեց խմբի՝ ըստ իմաստների՝ ուրախություն՝ io, he, ha, թախիծ, տիսրություն՝ vae, au, ohe, զարմանք՝ ehem, hem, արհամարհանք՝ phui, apage, կանչ, կոչ՝ heus, eho և փաղաքշանք՝ eia, euge արտահայտող:

Դասագրքում առանձին բաժին է նվիրված նաև լատիներենի բառակազմությանը: Այստեղ ներկայացված են լատիներենի բառակազմական հնարավորությունները՝ բառաբարդումը և ածանցումը՝ գոյականակերտ, ածականակերտ, բայակերտ ածանցներով և այլն:

Ոհս հեղինակների ավելի ուշ ժամանակներում կազմած լատիներենի դասագրքերը<sup>3</sup> ավելի լայն են ներկայացնում լատիներենը. դրանք պատճական ուսումնասիրություններով առատ են և տարածանակյա ուսումնասիրության տարրեր են պարունակում, իսկ էլ. Աղյանի քերականությունը զուտ նկարագրական է՝ համաժամանակյա հայեցակետով: Անշուշտ, դա պայմանավորված է եղել հայերենով լատիներենի քերականությունը ստեղծելու ժամանակ (անցյալ դարի կեսերին) գոյություն ունեցած ուսումնական ծրագրերով և ուսուցման գործնական բնույթով:

<sup>3</sup> Հմնտ., օրինակ՝ Козаржевский А. Ч. Учебник латинского языка. М., 1981, Ярхο В. Н., Покровская З. А., Катеман Н. Л. Латинский язык. М., 1983:

Աղայանն իրեն հատուկ գիտական բարեխողությամբ, մատչելի լեզվով ուսանողների համար ստեղծել է այս դասագիրքը, որը ոչ միայն երկար ժամանակ ծառայել է իր ուսումնական նպատակներին, այլև ուղղուց է եղել այն բոլոր նարդկանց համար, ովքեր ցանկացել են ուսումնասիրել հռոմեական բազմադարյան մշակույթն ու լեզուն:

Այնուամենայնիվ, դասագրքի արժեքը գնահատելիս չի կարելի սահմանափակվել միայն նրա գործնական նեղ նպատակադրումով։ Այն ունի նաև ընդհանուր մշակութային և լեզվաբանական նշանակություն, մասնավորապես՝ դասական քերականագիտական տերմինաբանությանը ծանոթացնելու և դրանց համապատասխան հայերեն համարժեքները տալու առումով։ Պետք է նշել նաև, որ անհրաժեշտ դեպքերում հեղինակը ծանոթությունների կարգով զուգահեռներ է անցկացրել հայերենի համապատասխան լեզվական իրողությունների հետ, որ մերոդական տեսակետից շատ գնահատելի է և ընդլայնում է ուսումնասիրողների լեզվաբանական պատկերացումները։

**Բանալի բառեր – լատիներեն, դասագիրք, դասական լեզուներ, լեզվաբանություն, քերականություն, ձևաբանություն, հարացույցներ, բառակազմություն, տերմին, զուգադրություն**

**НЕЛЛИ МКРТЧЯН – Первый армянский учебник латинского языка.** – В статье дана характеристика «Грамматики латинского языка (морфология)» Э. Агаяна. Следуя принципам структурной лингвистики, учёный стремился полноценно и непротиворечиво описать грамматику латыни. Изложив фонетический строй языка, он переходит к морфологическим особенностям частей речи, временами обращаясь к их синтаксическому применению. Помимо конкретной практической цели, учебник Э. Агаяна имеет и общекультурное, и сугубо лингвистическое назначение, в частности, ознакомить студентов с классической грамматической терминологией и привести соответствующие армянские эквиваленты.

**Ключевые слова:** латинский язык, классические языки, учебник, лингвистика, фонетика, грамматика, морфология, словообразование, терминология, синтаксис, парадигма

**NELLI MKRTCHYAN – The First Latin Textbook in Armenian.** – The article is devoted to the description of the textbook by Ed. Aghayan “The Grammar of the Latin Language” (morphology). Following the principles of structural linguistics, Ed. Aghayan tried to present a comprehensive and consistent analysis of this ancient language with utmost diligence. The description of phonetic facts is followed by a characterization of morphological features of the parts of speech in Latin, ranging from grammatical categories of essential parts of speech to their partial syntactic usage. Apart from its practical purpose, this textbook is highly valued for providing the learners with an important insight into the classical grammatical terminology and the corresponding equivalents in Armenian.

**Key words – Latin, classic languages, textbook, linguistics, morphology, phonetics, grammar, syntax, word forming, terminology**